



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. հոկտեմբերին /վերլուծություն/

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15271 գործարքներ, որոնց քանակը 2008թ. հոկտեմբերի համեմատ աճել է 5.0%-ով, իսկ 2009թ. սեպտեմբերի համեմատ՝ 12.0%-ով:

2009թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4045 օտարման գործարքների 81.9%-ը կազմել են առուվաճառքները, 17.2%-ը՝ նվիրատվությունները և 1.0%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. հոկտեմբերին, 2009թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 7.8%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 19.7%-ով:

2009թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 68.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. հոկտեմբերին, 2009թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.4%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ՝ 25.2%-ով:

2009թ. հոկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2008թ.	հոկտեմբեր 2009թ.	սեպտեմբեր 2009թ.
Կենտրոն	490000	461700	450900
Արաբկիր	401700	360100	350600
Քանաքեռ-Զեյթուն	313200	270400	266400
Նոր-Նորք	272600	221800	217600
Ավան	276800	228100	224300
Էրեբունի	267000	235700	234600
Շենգավիթ	283700	235800	231000
Դավթաշեն	304900	253700	248700
Աջափնյակ	269800	226000	222600
Մալաթիա-Մեքաստիա	255000	222800	218000
Նուբարաշեն	165600	143300	140700
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>300000</b>	<b>259900</b>	<b>255000</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հոկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. սեպտեմբերի համեմատ աճել են 1.9%-ով:

2009թ. հոկտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 376 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. սեպտեմբերի համեմատ աճել է 5.3%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ՝ 11.7%-ով:

2009թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2008թ.	հոկտեմբեր 2009թ.	սեպտեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	140300	135800	137900
	Ապարան	36400	44200	44200
	Թալին	47100	49800	49000
Արարատ	Արտաշատ	107800	88100	85500

	Մասիս	138000	119800	117500
	Վեդի	83300	89700	87600
	Արարատ	69500	84100	85200
Արմավիր	Վաղարշապատ	178600	159700	155700
	Արմավիր	128900	115300	113300
	Մեծամոր	89300	83500	81600
Գեղարքունիք	Սևան	102500	90600	88600
	Գավառ	51800	43000	41700
	Մարտունի	71200	80900	79000
	Վարդենիս	33000	32000	31600
	Ճամբարակ	16500	19200	19200
Լոռի	Վանաձոր	102400	91000	91600
	Ստեփանավան	48800	56300	55200
	Մայիսակ	62800	76100	76100
	Ալավերդի	32700	32200	32200
	Տաշիր	33500	34900	34900
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13000	14100	14100
Կոտայք	Աբովյան	177400	147500	141900
	Նոր Հաճն	138100	132000	132400
	Բյուրեղավան	117700	98000	96000
	Եղվարդ	127400	124300	121600
	Հրազդան	75300	59000	60500
	Ծաղկաձոր	165000	175400	179000
	Չարենցավան	98200	77100	78200
Շիրակ	Գյումրի	118200	112000	108400
	Արթիկ	59400	57800	56400
	Մարալիկ	29000	29600	29600
Սյունիք	Գորիս	114600	135000	130700
	Կապան	103500	104100	103700
	Սիսիան	84600	82800	85000
	Մեղրի	49200	55500	55500
	Ագարակ	30300	32800	32800
	Քաջարան	53500	58800	58000
	Դաստակերտ	7000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	83800	71500	69500
	Եղեգնաձոր	106400	110800	108300
	Զերմուկ	140600	110800	113700
Տավուշ	Դիլիջան	106000	90000	88400
	Իջևան	141500	128800	128800
	Բերդ	40600	42000	42000
	Նոյեմբերյան	31200	33200	33200
	Այրում	21100	24000	24000

2009թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. սեպտեմբերի համեմատ աճել են 0.9%-ով:

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 446 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 157, մարզերում միասին վերցրած՝ 289: 2009թ. հոկտեմբերին, 2009թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 15.5%-ով, ընդ որում Երևանում՝ 27.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 9.9%-ով: 2008թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակը նվազել է 9.9%-ով, ընդ որում Երևանում աճել է 78.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 29.0%-ով:

2009թ. հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2008թ.	հոկտեմբեր 2009թ.	սեպտեմբեր 2009թ.
Կենտրոն	508500	468000	468400
Արաբկիր	438200	367000	361500
Քանաքեռ Զեյթուն	324700	275400	280000
Նորք Մարաշ	310400	277800	279200
Ավան	289800	234500	235000
Էրեբունի	290000	242000	249700
Շենգավիթ	292800	241000	240300
Դավթաշեն	324500	259000	264100
Աջափնյակ	300900	232000	242900
Մալաթիա-Սեբաստիա	294200	228200	230300
Նուբարաշեն	168300	146800	141700
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	<i>322000</i>	<i>270200</i>	<i>272100</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հոկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. սեպտեմբերի համեմատ նվազել են 0.7%-ով:

2009թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2008թ.	հոկտեմբեր 2009թ.	սեպտեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	144800	141000	140800
	Ապարան	38800	46400	46100
	Թալին	48500	51100	50700
Արարատ	Արտաշատ	112100	90000	88000
	Մասիս	139200	121800	124800
	Վեդի	91600	91500	90300
Արմավիր	Արարատ	70700	87100	87400
	Վաղարշապատ	179700	163300	164300
	Արմավիր	132500	117600	116800
	Սևան	106000	91900	90100
	Գավառ	54400	45600	47400

Գեղարքունիք	Մարտունի	77200	82200	82400
	Վարդենիս	36900	33900	33500
	Ճամբարակ	21100	20400	20700
Լոռի	Վանաձոր	109400	94200	94400
	Ստեփանավան	53500	58800	57300
	Սպիտակ	67500	78200	78000
	Ալավերդի	37200	34000	33800
	Տաշիր	37700	36900	36800
	Թումանյան	10400	10000	10000
	Շամլուղ	7400	7400	7400
	Ախթալա	16200	18200	18200
Կոտայք	Արուսյան	191600	151000	147000
	Նոր Հաճն	142300	135500	135200
	Բյուրեղավան	119700	99400	97400
	Եղվարդ	133500	126000	123200
	Հրազդան	79500	62200	62000
	Ծաղկաձոր	267300	294500	293000
	Չարենցավան	100200	79800	83000
Շիրակ	Գյումրի	120300	113900	111900
	Արթիկ	63300	59400	57600
	Մարալիկ	32700	31300	31300
Սյունիք	Գորիս	125400	136500	132300
	Կապան	105800	106300	107300
	Սիսիան	85900	85600	87600
	Մեղրի	51400	57200	56800
	Ագարակ	33300	34300	34900
	Դաստակերտ	10400	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	85700	72700	71400
	Եղեգնաձոր	108900	112600	111200
	Ջերմուկ	98400	111200	111000
Տավուշ	Դիլիջան	119200	94700	96800
	Իջևան	143200	131300	131800
	Բերդ	42300	43500	43500
	Նոյեմբերյան	36400	34600	34500
	Այրում	23000	25800	25800

2009թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. սեպտեմբերի համեմատ նվազել են 0.4 % -ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1375 միավոր /609.49 հա/ հողեր, որից Երևանում` 88 միավոր /8.51 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 524 միավոր /472.33 հա/, որից Երևանում` 3 միավոր /1.56 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 646 միավոր /99.77 հա/, որից Երևանում` 63 միավոր /5.67 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 180 միավոր /11.77 հա/, որից Երևանում` 22 միավոր /1.28 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 14 միավոր /6.41 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 9 միավոր /18.78 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 2 միավոր /0.43 հա/:

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1257 միավորի /575.87 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 81 միավոր /7.96 հա/, նվիրատվության գործարքներ՝ 101 միավորի /27.89 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.55 հա/ և փոխանակության գործարքներ՝ 17 միավորի /5.72 հա/:

Հանրապետությունում 2009թ. հոկտեմբերին, 2008թ. հոկտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 38.4%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 45.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 33.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 16.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 172.54 հա, որից 160.59 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 26.2%-ը կամ 329 գործարքներ /287.13 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 19 գործարքներ /0.40 հա/, իսկ 73.5%-ը կամ 924 միավորը /284.72 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 62 միավոր /7.55 հա/:

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 4 գործարք /4.01 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	0	0.00	8	0.12	11	0.29	3	1.56	0	0.00	48	5.00	11	0.99
Արագածոտն	7	9.37	0	0.00	0	0.00	3	0.02	30	18.58	0	0.00	38	3.21	3	0.04
Արարատ	30	136.23	2	0.73	9	0.99	13	0.07	61	24.37	2	0.15	68	6.00	3	0.01
Արմավիր	3	3.84	0	0.00	0	0.00	10	0.10	60	43.71	0	0.00	57	5.55	8	0.34
Գեղարքունիք	5	3.10	0	0.00	72	5.70	8	5.15	16	17.39	0	0.00	21	1.81	5	0.09
Լոռի	8	26.00	1	0.65	8	41.10	28	1.27	54	28.59	1	0.50	134	15.75	3	0.03
Կոտայք	12	13.19	3	0.12	10	0.57	22	0.84	87	39.07	3	0.21	85	7.24	14	1.10
Շիրակ	1	4.07	1	0.05	5	0.18	10	0.15	35	21.80	0	0.00	8	0.71	0	0.00
Սյունիք	1	12.58	0	0.00	0	0.00	1	0.08	10	9.85	0	0.00	5	0.39	0	0.00
Վայոց Ձոր	9	17.98	0	0.00	1	0.04	11	0.03	6	1.89	0	0.00	7	0.63	2	0.30
Տավուշ	0	0.00	0	0.00	5	0.26	7	0.13	25	10.47	0	0.00	4	0.31	0	0.00
Ընդամենը	76	226.36	7	1.55	118	48.96	124	8.13	387	217.28	6	0.86	475	46.60	49	2.90

Ստորև ներկայացվում է 2009թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական

նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Սահման	18	0.31	0	0.00	8	0.12	10	0.19	1	0.10	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.10
ազածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	9	9.21	6	9.19	0	0.00	0	0.00	3	0.02
արատ	2	0.72	1	0.72	0	0.00	1	0.001	52	137.30	30	136.23	1	0.01	9	0.99	12	0.07
մավիթ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	3.44	1	3.34	0	0.00	0	0.00	10	0.10
դարձուհի	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	85	13.95	5	3.10	0	0.00	72	5.70	8	5.15
ի	3	40.17	0	0.00	1	40.00	2	0.17	41	28.65	7	25.80	1	0.65	7	1.10	26	1.10
տար	14	0.74	1	0.01	4	0.29	9	0.44	31	12.81	10	12.02	2	0.11	6	0.28	13	0.40
ակ	3	0.06	1	0.05	1	0.01	1	0.002	14	4.38	1	4.07	0	0.00	4	0.16	9	0.15
ունիթ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	12.66	1	12.58	0	0.00	0	0.00	1	0.08
յոգ Ձոր	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	20	18.05	9	17.98	0	0.00	1	0.04	10	0.03
վուշ	2	0.02	0	0.00	2	0.02	0	0.00	10	0.38	0	0.00	0	0.00	3	0.25	7	0.13
դամենը	43	42.02	3	0.78	16	40.44	24	0.81	276	240.93	70	224.31	4	0.77	102	8.52	100	7.33

Հանրապետությունում 2009թ. հոկտեմբերին արձանագրվել է գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք /2.05 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. հոկտեմբերին, 2008թ. հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 61.7%-ով: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 1 գործարքով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 61.8%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 59.3%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 61.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 65.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	1.40	73.1	295.3	221.1	19	4.61	365.0	12000.0	4420.0
Ապարան	2	2.30	446.8	446.8	446.8	1	0.31	86.5	2727.3	542.0
Թալին	1	5.49	45.5	45.5	45.5	4	3.27	93.6	5494.5	474.3
Ծաղկահովիտ						6	10.40	79.5	1000.0	247.6
Արարատի մարզ										
Արտաշատ	1	0.27	2114.7	2114.7	2114.7	23	5.99	335.1	10833.3	2088.7
Մասիս	18	40.06	10.0	2185.5	414.6	17	9.38	200.0	11904.8	2922.2

Վեղի	11	95.90	17.7	167.2	89.7	19	8.03	207.0	10795.1	1802.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						37	18.99	294.3	9090.0	1146.4
Բաղրամյան	1	3.34	131.7	131.7	131.7	8	19.69	90.6	2561.1	641.5
Վաղարշապատ						15	5.02	444.4	11764.7	2845.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	1.32	199.8	1875.0	438.2
Ճամբարակ	4	2.80	127.0	791.0	403.0	4	4.08	60.5	953.3	242.2
Մարտունի								51.1	2850.0	565.5
Սևան	1	0.30	1221.0	1221.0	1221.0	3	2.05	52.2	2134.8	235.7
Վարդենիս						5	9.94	41.2	2575.1	402.1
Լոռու մարզ										
Այվերդի						6	1.68	170.4	6424.2	945.5
Գուգարք	2	0.93	80.9	392.0	236.4	4	0.60	234.6	6065.9	1100.0
Սպիտակ	2	4.57	190.5	203.3	196.9	4	1.82	250.0	5555.5	603.3
Ստեփանավան	3	20.30	483.0	583.8	550.0	6	2.46	90.6	1686.6	392.5
Տաշիր						34	22.04	45.3	1384.4	195.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	4.43	122.1	755.0	456.4	38	10.26	279.3	11942.7	4647.7
Եղվարդ						32	21.29	174.4	11971.8	3314.3
Հրազդան	5	7.59	60.0	848.8	239.0	17	7.51	130.5	10256.4	1550.3
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	3.76	252.0	1693.1	488.5
Ամասիա	1	4.07	122.4	122.4	122.4			40.9	261.0	132.5
Անի						19	17.18	110.6	546.9	271.7
Աշոցք								58.5	215.8	118.8
Արթիկ						8	0.86	79.4	1428.6	242.6
Սյունիքի մարզ										
Գորիս	1	12.58	217.9	217.9	217.9	8	8.89	92.6	1023.2	488.6
Կապան						1	0.80	120.0	841.6	280.6
Մեղրի						1	0.16	193.0	3000.0	590.0
Սիսիան								46.3	1977.4	286.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	1.98	60.0	139.5	104.8	5	0.59	125.0	10000.0	1515.6
Վայք	4	16.00	39.0	104.4	73.6	1	1.30	58.8	1430.7	500.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	1.30	213.3	3783.8	505.6
Իջևան						4	1.93	267.5	9454.5	1020.3
Նոյեմբերյան						18	7.24	46.7	7368.4	754.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

r	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին



Արագածոտնի մարզ										
Աշտարակ						34	27821.0	130.7	22200.0	2571.0
Ապարան								124.1	609.6	250.0
Թալին						3	4046.0	63.2	1454.8	135.6
Ծաղկահովիտ						1	250.0	60.0	214.3	77.8
Արարատի մարզ										
Արտաշատ	6	6410.0	535.4	540.5	537.7	12	10739.0	173.9	7140.3	892.0
Մասիս	1	980.0	304.6	304.6	304.6	40	28281.0	187.5	25000.0	1218.5
Վեդի	2	2470.0	146.9	147.6	147.3	16	20936.0	126.1	5000.0	661.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						23	26020.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						3	3765.0	100.0	833.3	178.5
Վաղարշապատ						31	25717.0	197.4	26528.4	1535.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	3750.0	186.6	1084.3	443.5
Ճամբարակ	72	56963.0	102.0	261.1	127.8	6	3088.0	71.3	2286.2	131.6
Մարտունի						9	9930.0	119.3	5000.0	273.0
Սևան						2	1320.0	240.0	3110.4	220.1
Վարդենիս								72.5	987.2	146.8
Լոռու մարզ										
Ալավերդի						2	1230.0	114.3	1388.9	193.8
Գուգարք						1	1016.0	77.9	14083.3	725.1
Սպիտակ	4	5310.0	49.7	54.3	51.1	129	154141.0	104.9	1348.3	190.5
Ստեփանավան	3	5658.0	75.6	564.4	235.2	1	84.0	88.2	1666.7	139.2
Տաշիր						1	1030.0	45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	2809.3	1543.5	3484.5	3074.8	46	41107.5	264.5	35353.5	2045.0
Եղվարդ						31	24587.0	173.6	27000.0	2785.6
Հրազդան						8	6699.0	117.7	34848.5	1341.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	800.0	1625.0	1625.0	1625.0	1	40.0	113.6	18750.0	330.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						4	5050.0	67.9	180.6	118.1
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ	2	835.0	57.5	254.5	156.0	3	1970.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1839.0	112.2	1700.0	290.5
Կապան						2	1118.0	67.9	2638.9	230.0
Մեղրի								68.5	632.9	145.8
Միսիան						1	980.0	123.5	875.0	158.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	400.0	757.5	757.5	757.5	5	4799.0	96.7	7659.6	392.2
Վայք						2	1500.0	120.7	1448.3	157.2
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	95.0
Իջևան	3	2475.0	156.4	1430.0	610.2	4	3090.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան								125.0	1948.1	163.0

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 8 գործարքներ 1.99 հա մակերեսով, ընդ որում, 3-ը՝ /0.79 հա/ Լոռու, 4-ը՝ /1.06 հա/ Կոտայքի և 1-ը՝ /0.14 հա/ Շիրակի մարզերում:

2009թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1195 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցումների քանակի 7.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 85.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. հոկտեմբերին 2009թ. սեպտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 15.0%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ աճել՝ 3.9%-ով:

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 56 բնակարանների, 35 անհատական բնակելի տների, 371 հասարակական, 64 արտադրական նշանակության օբյեկտների, 610 միավոր /4183.61 հա/ հողերի և 59 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 5 վարձակալության գործարքների /այդ թվում 1 միավոր՝ 0.001 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 61.5%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ՝ 72.2%-ով: 2009թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 4183.61 հա հողերից 2.20 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 4181.41 հա հողերի 2.50 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.21 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 1049.55 հա, որից 21.72 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ 1026.0 հա՝ ընդերքօգտագործման: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 679.16 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. հոկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	3	668.86	24	51.15
Արարատ	0	0.00	36	120.13
Արմավիր	0	0.00	31	677.85
Գեղարքունիք	1	0.30	266	975.31
Լոռի	0	0.00	27	73.73
Կոտայք	0	0.00	5	162.87
Շիրակ	1	10.00	74	145.04
Սյունիք	0	0.00	12	21.72
Վայոց Ձոր	0	0.00	17	194.30
Տավուշ	0	0.00	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>5</b>	<b>679.16</b>	<b>492</b>	<b>2422.1</b>

2009թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2173 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.2%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. սեպտեմբերի համեմատ աճել է 39.7%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 3.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.8%/, առանձնատների /23.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.3%/ և հողերի /17.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 972 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. սեպտեմբերի համեմատ աճել է 33.3%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ՝ 12.5%-ով:

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 924.74 հա հողեր, որից 7.22 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 97.3%-ը կամ 899.71 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.21 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 673.49 հա, որից 671.83 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 149 գործարքներ, որից 121-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 74.5%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 18.8%-ն՝ անհատական բնակելի տների, 2.0%-ը հասարակական նշանակության օբյեկտների, 0.7%-ը արտադրական նշանակության օբյեկտների, 0.7%-ը այգետնակների, 0.7%-ը ավտոտնակների և 2.7%-ը՝ հողերի նկատմամբ: 2009թ. սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 38.0%-ով, ընդ որում Երևանում 45.8%-ով, իսկ մարզերում՝ 12.0%-ով: 2008թ. հոկտեմբերի համեմատ հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 8.8%-ով, ընդ որում Երևանում՝ 31.5%-ով, մարզերում նվազել՝ 37.8%-ով:

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 2 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: Մասնավորեցման գործարքների քանակն ինչպես 2009թ. սեպտեմբերի, այնպես էլ 2008թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 60.0%-ով: 2009թ. հոկտեմբերին մասնավորեցման գործարքներից 1-ական գործարք արձանագրվել են Երևանում և Շիրակի մարզում:

2009թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2421 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. սեպտեմբերի համեմատ աճել է 14.5%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 11.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.0%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***